

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարեկանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք գիտնում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ
Երեսու ընտանի դաստիարակները Սօրբօնում
կամուրջան մասին: Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Երեսու ընտանի լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր: ԷՆՈՒՅԻՆՆԵՐ:
— ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:
Երեսու ընտանի լուրեր:

ԵՐԵՍՈՒՄ ԲՆԱՆԻ ԴԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՍՈՐ-
ԲՈՆԵՆՈՒՄ ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սօրբօնում ասում են՝ արաբական գի-
տութիւնը, արաբական փիլիսոփայութիւնը,
մահմեդական գիտութիւնը, մահմեդական
քաղաքակրթութիւնը, բայց իսկապէս ինչ են
նշանակում այդ խօսքերը: Այդ հարցը քնն-
ում էր Երեսու ընտանի Սօրբօնում ուն-
իւթիւնների ահագին բազմութեան առաջ:
Իսկապէս, — ասեց նա, — մէկ կամ երկու
դարերի ընթացքում արաբները մեր ուսու-
ցիչներ էին, բայց այդ մինչև այն ժամա-
նակն էր, քանի որ մենք չէինք ծանօթացել
յուսկան բնագիտութեան հետ: Արաբական
այդ գիտութիւնը և այդ փիլիսոփայութիւն-
ը միայն միջնորդ-փոխադրութիւն էին յու-
սկան գիտութեան և փիլիսոփայութեան:
Պ. Բրնան մասնացոյց էր անում մահմեդա-
կան երկրների այժմեան յետադիմութեան
վրա, այն ցեղերի մատուցած ոգնշութեան
վրա, որոնք միայն իսլամութիւնից են քա-
ղաքում իրանց կուտուրան և իրանց կրթու-
թիւնը: «Ուղղափառ» խելքը կատարելա-
պէս փակված է գիտութեան համար, ան-

ընդունակ է որ և է մի բան ուսումնասի-
րել կամ ստեղծել մի նոր գաղափար: Հա-
մոզված լինելով, որ Աստուած տալիս է հա-
րատութիւն և զօրութիւն ում որ ինքն կա-
մենում է, ուշադրութիւն չը դարձնելով
գիտնականութեան կամ անձնական փաստա-
յնքի վրա, մահմեդականը ամենախոր ար-
համարհանք է գրում գէպի գիտութիւնը
և գէպի այն ամենը, ինչ որ կազմում է
հարստական ոգու գեղեցկութիւնը և ոյժը:

Բայց ի՞նչ կիրառ արդեօք բացատրել, որ,
համարեն 500 տարի, մահմեդական եր-
կրներում կային գիտնականներ և հոգևա-
ւոր մտածողներ և որ, այդ դարաշրջանում
մահմեդական աշխարհը բարձր էր կանգ-
նած քրիստոնէականից: Այդ նրանից է, որ
այն դարաշրջանում գեա ևս իսլամութիւնը
կատարելապէս չէր յաղթանակել: Այն մեծ
չարժուէր, որով յուսկան քաղաքակրթու-
թեան ողին անցաւ և ճանաչվեցաւ Եւրո-
պայում, կատարվեցաւ առանց իսլամութեան
թեան մասնակցութեան: Երբ արաբները
ազատուցման յաղթող հանդիսացաւ օմայիդ-
ների ազգատոհմից, մօտ 750 թվին, նոր
կրօնի կենտրոնը տեղափոխվեցաւ Տիբրիս և
Եփրատ գետերի երկրում, ուր գեա ևս լին-
էին հետքեր արեւելքի ամենապայծառ
քաղաքակրթութիւններից մէկի, Սասանեան
պարսիկների քաղաքակրթութեան հետքերը,
որ գտնվում էին իրանց բարձրութեան գա-
ղաթնակէտին խորով Նուստրիվանի թագա-
ւորութեան ժամանակ: Արդէն շատ դարեր

այնտեղ ծաղկում էին արուեստը և արդի-
նաբերութիւնը, իսկ խօսքով աւելացրեց դը-
րան և մտաւոր գործունէութիւնը. նա հո-
վանաւորում էր փիլիսոփայութեան, որ սը-
տրված էր Կ. Պօլից, և հրամայեց թարգ-
մանել Հնդկաստանի արեգական գրքերը: Քը-
րիստոնէայ նկատորանները, որ ազդեալա-
կութեան նշանաւոր տարր էին կազմում,
պարագում էին յուսկան գիտութեամբ և
փիլիսոփայութեամբ. բժշկականութիւնը կա-
տարելապէս նրանց ձեռքումն էր: Բազմադը
կարծես վերածնեալ Պարսկաստանի մայրա-
քաղաքը դարձաւ: Փառաւոր խալիֆները,
կարծվեցան ժամանակակիցները, հա-
մարեն մահմեդականներ չէին, նրանք շը-
ջապատված էին անհաւանական փարսե-
րով, քրիստոնէականով, որոնց միջից նրանք
ընտրում էին իրանց համար վարչական ան-
ձինք և բժշկներ: Նրանք ուսումնասիրում
էին Հնդկաստանը, հին Պարսկաստանը և
մանաւանդ Յունաստանը: Ժամանակներ պա-
տահում էին, որ բարեպաշտ մահմեդական-
ներին յաջողվում էր պալատում բեկայցիա
(յետադիմութիւն) մտնել. խալիֆը դառ-
նում էր աստուածապաշտ և զոհում էր իր
օտարակրօն բարեկամներին և ազատ մտա-
ծողներին. բայց, յետոյ, ազատ ոգու հո-
սանքը յաղթող էր հանդիսանում, խալիֆը
յիշում էր իր գիտնականներին և ուրախու-
թեան բարեկամներին, ի մեծ դժգոհութիւն
մահմեդական պոպուլյաներին: Այդպէս և
բացատրում Կ. Բրնան այդ հետաքրքիր և

բազմադեան գրաւիչ քաղաքակրթութիւնը,
որի մասին յիշողութիւնը, չնորհիւ, «Հազար
և մէկ գիշեր» վերնագրով առաջինների, տպա-
ւորվել է ամենքի երեւակայութեան մէջ:
Այդ փիլիսոփայական և գիտնական շարժ-
ման ժամանակ, թարգմանեցին Արիստոտե-
լի, Եւկլիդի, Գալլենի հեղինակութիւնները,
մի խօսքով այն ամենը, ինչ որ կար այն
ժամանակ յուսկան գիտութեան մէջ: Խա-
լամի մէջ, այդպիսով, ծագեց բացիճալիզմ:
Աստղաբաշխութիւնը և ալքեմիան սատարիկ
առաջ գնացին Պարսկաստանում: Քիմիան
հնարեց դիտելաբան, շատ կարելի է, և
վառօղ: Սպանիան, հետեւելով արեւելքի օրի-
նակին, պարագայ գիտութեամբ, և խու-
բաշա, Խու-Տօֆալի, և Ալքերոս, XII-դ
դարում, գիտութիւնը այնտեղ այնպիսի
բարձրութեան վրա կանգնեցրին, որի վրա
նա կանգնած չէր եղել մի քանի դարերի
ընթացքում: Ահա այն բոլորը, ինչ որ ա-
նուանում են արաբական, և որ, իսկապէս
յուսկան-աստանիական էր, կամ մինչև անգամ
առաւել յուսկան, որովհետեւ Յունաստանն
էր միայնակ գիտութեան աղբիւր, իսկ ա-
րաբականը միայն լեզուն էր: Պ. Բրնա-
նի կարծիքով, արաբական ցեղը այդտեղ
ոչինչ նշանակութիւն չունի. գիտնականների
և փիլիսոփաների մէջ միայն մէկն էր իսկա-
կան արաբ, — դա Ալինդին է. իսկ բոլոր ու-
րիշները պարսիկներ էին, սպանացիք էին,
բուխարայի, Սամարկանդի, Կորգոփայի և
Սեփիլիայի բնակիչներն էին, նրանց խելքը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԳԵՆ ՆԱԽԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

(Մի կտոր իմ վէպից)

— Աղա, դառողը այրվում է:
Իվան Գրիգորիչ Մարտիկանցը մի միջնադասակ,
չաղ և բաւական ջանքի մարդ էր եւրոպական սե-
նագուստի մէջ: Նրա լիքը ու կոտորակ և մարդու
ստիքած երեսի կարմիր գոյնը մի վայրկեանում
թուա զորադ լուրը լսելու ժամանակ:
— Նրբ, որ ժամին և գառողի որ կողմից է ըս-
կան հրդեհը, վերին աստիճանի անհամբերութեամբ
և հրամայաբար հարցնում էր նա երկու փոքրիկ
և խորամանկ աչքերի ընկերը արագութեամբ չուս-
տալով և ձեռքերը տարածելով դէպի առաջ: Կար-
ծես թէ նա ուղում էր կատաղաբար յարձակվի-
լու չարագուշակ լրաբերի վրա և տեղի ու տե-
ղը խնդրել նրան:
— Կարելի երեւցել է մօտաւորապէս երեք քա-
ղաք ժամ սրանից առաջ—գորգոյն ձայնով
զատասխանեց լրաբերը երկրաշարժութեամբ յետ
ու յետ քաշվելով: Ես նոր գործս վերջացրել և
պատրաստվում էի քնելու, երբ ականջիս հասաւ
մի տրաքոցի ձայն: Չայնը սատարիկ էր, կարծես
թէ ամբողջ զառողը քարոքանդ էր լինում... ես
մի քանի րոպէ մնացի չուստած... չը գիտէի ինչ
անել, ուր վազել: Մի կերպ խելքս գլուխ հա-
պարեցի և դուրս թողայ, հէնց այն վայրկեանին,
երբ ես կամենում էի առաջ վազել, մէկէլ տես-
նեմ աջ կողմից, կաթնաների բաժնից բոցախառն
ծուրը դուրս է փչում... իսկոյն հասկացայ, որ
մեծ նաւթաթանկանից մէկը ինչպէս և իցէ
պատուվել է: Կրակը գիտնում էր դէպի իւր մաք-
րելու բաժնից: Մշակները դարձել էին և որը
տակլոր, որը հագուստով, ամենքը դիմեցին կրակ
կերակրող տեղը հրդեհի առաջը կապելու, իսկ ես
իսկոյն առանց գործակատարից թոյլտուութիւն

խնդրելու վաղեցի քաղաք, որ ձեռ յայտնեմ:
Իվան Գրիգորիչի կողմը անհամբեր չնաւու-
թեանից արագութեամբ բարձրանում և ցածանում
էր: Մի քանի վայրկեան լուս մտածելուց յետ նա
դիմեց ծառաներից մէկին, որոնք բերանները բա-
ցած ուշադրութեամբ լսում էին լրաբերի խօսքերը:
— Այս վայրկեանիս լծվի իմ կողքը, ես ա-
ռանց լուրէ ուշանալու պիտի գործարան հասնեմ:
Դրանքները վաղեցին աղայի հրամանը կատա-
րելու:

— Վերջը իմ տունս կը քանդեն, ինչ կը մնա-
կայնեն, յետին աղքատութեան մէջ կը ձգեն, օ-
րուայ հաջին կարօտ կը դարձնեն այս անիծված-
ները... այս անպտանները... մարդու կերպա-
րանք ունեցող այդ անիւղճ դազանները... այս...

այս, այս:
— Թող Աստուած պատժի այն չար մարդուն, ո-
րը համարձակվել է այս միտքով ձեռ հանցանք...
Թող այս գիշերովս հրդեհի կրակը նրա գլխին
թափվի: Աստուծոյ կամքն է, աղա, մենք ինչ ա-
նեմք, մենք իս դիտմամբ չենք կրակ գցում ու
այրում ձեր գործարանը:

Լրաբերը այս ասելով գտակը ձեռքին հեռացաւ
պատի տակ: Ընդարձակ նախասենյակի պատից
քաշ տուած կանխիղի ճառագայթները մի րոպէ
տարածվելով նրա նաւթաթանկ մուրի մէջ կորած
բարձր հասակի վրա, լուսաւորեցին նրա սե և
կեղտոտ դէմքը:

Խիտաբոյս յօնքերի տակից փայլեցին անսովոր
վիշտ և հոգեկան տխուր տրամադրութիւն արտա-
յայտող սե աչքերը: Բայց զլիս ալեխառն մաղե-
րի բնական գոյնը կրակ էր թանձր կեղտի և նաւ-
թային մուրի տակ:

— Մշակը ո՞վ է, որ նրա Աստուածը ո՞վ լինի—
դուռում էր իվան Գրիգորիչը կատաղի առիւծի
նման: Մշակը Աստուած չունի, նրա Աստուածը
փայտն է. եթէ դուք Աստուած ունենայիք, մի տա-
րուայ մէջ իմ գործարանը երկու անգամ չէր այր-
վի. եթէ դուք խիղճ և հոգի ունենայիք ձեր

կեանքը կը զոհեք և չէիք թողնի, որ ձեր աղին,
ձեզ կերակրողին փաս հասնէ:
Լրաբերը լուս էր, նա գիտէր, որ իվան Գրի-
գորիչի ինքնահաւան բնաւորութիւնը աստիկ
թշնամի է ուրիշների հակախօսութեան, նամանա-
ւանց այսպիսի դժբաղդութեան բաղկենքում:

— Աղա, ֆաէտօնը պատրաստ է, ներս վազեց
ծառան:
— Ես գնում եմ, գու էլ վազիր այս րոպէիս
գործարան—դարձաւ աղան դէպի լրաբերը:

Մի քանի րոպէից յետոյ երկու սեւաւոյն նոյոյ-
նեղով լծած փառաւոր կառքը թանգաղին, տաք
մուշտակի մէջ փաթեթված իվան Գրիգորիչին
տանում էր գործարան:

Հիւսիսային քամին փչում էր, անձրեւի կաթիլ-
ները բռնի զօրութեամբ զարկվելով կառքի պա-
տահաններին կրկնապատկում էին իվան Գրիգո-
րիչի յուզմունքը: Կարծես թէ բաւական չէ մարդ-
կանց չարամտութիւնը, մշակների անխղճութիւնը,
բնութիւնն էլ մի կողմից էր գործ դնում իր խն-
տութիւնը հակառակի նման հէնց այս գիշեր
բարձրացնելով ներհակ քամի հրդեհին աւելի ոյժ
տալու համար:

Այդ բոլորի մասին իվան Գրիգորիչը կառքի
մէջ մտածելով այնչափ կատաղած էր, որ քիչ էր
մնում բարկութիւնից տրաքով իրան գործարանի
նաւթաթանկային պէս: Ժամանակ ժամանակ կառ-
քի պատուհանից գլուխը դուրս բերելով մտիկ էր
անում հեռաւոր կրակի լուսաւորութեան, և ան-
համբերութեամբ հրամայում էր կառապանին քա-
ղաք ժամում գործ դնել երկու կշտակեր և առողջ
ձիերի մի ամբողջ շարքովս հանգստութեանից
ստացած ոյժը և զօրութիւնը:

Հասնելով քաղաքի ծայրը, կառապանը մի ան-
գամ ևս մտաւից ձիերին և կառքը անհետացաւ
գիշերային խաւարի մէջ: Իսկ լրաբերը դուրս վա-
զելով փողոց աղայի տունից, առանց վայրկեան
յապաղելու, ճանապարհվեց դէպի գործարան: Նա
չը պիտի ուշադրութիւն դարձնի ոչ քամու և ոչ

էլ անձրեւի վրա, նրան հրամայված է ինչպէս և
իցէ չուտ տեղ հասնել: Նա չէր կարող ուշանալ.
այսպիսի րոպէներում ամենաչին թոյլութիւնը
մշակի կողմից աղայի աչքում մեծ յանցանք է
փոխվում:

Այրվող գործարանը քաղաքից երեք վերստա-
չափ հեռու է գտնվում. լրաբերը ճանապարհը
կարճելու համար ծովի ափով էր գնում: Լայնա-
տարած ծովի ալիքների չիչիփոցը գիշերվայ խա-
ւար միջուրով մէջ տարածվելով, անախտեք երկու-
ղալի տպաւորութիւն էր անում մարդու վրա: Այն
մի չնչաւոր արարած, ոչ մի կենդանի առարկայ
չէր երեւում ծովափում, բացի այդ սե և վիթխարի
մարդու, որ գիշերվայ ուրաւակալին նման հակա-
յական քայլերով շտապում էր դէպի առաջ, խորը

աւազի մէջ թաղվելով իր ոտերը: Զանկարծ նա
կանգնեց, կարծես թէ մի բան մտաբերելով և եր-
կու ձեռքը մեքենաբար խփելով ձախտին մի բո-
ւլէ անշարժ մնաց:

— Ո՞վ Աստուած, եղբայրս և փոքր որդիս հրդե-
հից քիչ առաջ պառկել էին քնելու... բայց որ-
տեղ էին նրանք պառկել... այո, այո... մտաբե-
րում եմ, հէնց այն կողմում... ուր որ կաթնան
տրաքվել էր... նրանք չը դիմանալով մեր ընդհա-
նուր սենեակից ցրտին, այս գիշեր տեղափոխվել
էին կաթնաների բաժնից փառաբանի մօտ քնե-
լու: Աստուած իմ, ինչ կը պատահի նրանց եթէ
ժամանակին չեն դարձի... այրվող նաւթը ուղ-
ղակի նրանց կողմն էր ցատկում... նրանք իմ աչ-
քովը չընկան:

Երկնակամարը կրակի լուսից շառագունել էր,
քամու զօրութեանից բոցը կատաղաբար այս ու
այն կողմ էր տարածվում... ամբողջ Սե քաղաքը
ծուխի մէջ թաղվել էր: Լրաբերը սկսաւ իր յոգ-
նած ոտերին ոյժ տալ:

Տեղ հասնելով, իվան Գրիգորիչի առաջին հա-
յացքը հաղի կարողացաւ ճանաչել կրակի և ծուխի
մէջ կորած գործարանը: Սե քաղաքի հատարակու-

արարական չէ, իսկ արարական լեզուով նրանք այնպէս էին ճշնշում, որպէս ճշնշում էին միջնադարեան մտածողները իրանց լատինական լեզուով: Արարական լեզուն յարմար է բանաստեղծութեան և պերճախօսութեան համար, և վատ գէշ է մետաֆիզիկայի համար: Եթէ այդ շարժումը արարական չէր, ուրեմն, առանձն ևս, նա մահամետական չէր, այլ այդ շարժումը քրիստոնեաների, հրէաների և մահամետականների գործ էր, որոնք ներքնապէս յուզված էին իրանց սեփական կրօնի դէմ: Ուղղափառ մահամետականները անիծում էին այդ շարժումը, գիտութիւններով պարապող մարդկանց նրանք անհաւատ էին անուանում: Բողոքներում ծեծում էին նրանց, հրդեհում էին նրանց աները, և կառավարութիւնը, ամբիոխն ու բախումիւն պատժաւելու համար, շատ անգամ նրանց մահուան պատժի էր դատապարտում:

Իսկապէս համբերում էր փիլիսոփայութեանը, քանի որ ինքն հաստատ չէր. բայց 1275 թվից, մահամետական աշխարհը խորապէս անհաւատութեան տգիտութեան մէջ: Գաղթական իսկամբ խեղդում է ամեն տեսակ մտաւոր ազատութիւն յառաջագիւժութեան հակառակ գաղափարներին ճշման տակ: պետութիւնը հիմնված է յայտնութեան վրա, նրա ձեռք անշարժ է: Բնական այդ ժամանակ այնպիսի մի բացատրութիւն տուեց, որ ստիպեց շատերին ժպտալ: «Ես միտք չունեմ փրկարական խօսքեր ասել այն հանգանակներից (Символъ) որ և է մէկի դէմ, որոնց մէջ մարդկային խեղճը հանգիստ է որոնում: Իսկամութիւնը, որպէս կրօն, գեղեցիկ կողմեր ունի. ես երբեք մեղքիմ չեմ մտել առանց մի փոքր յուզմունքի,—ասել արդեօք մինչև անգամ,—առանց և մի փոքր ցաւակցութեան, որ ես մահամետական չեմ: Բայց մարդկային մտքի համար, իսկամութիւնը փնտրակար է: Իսկամը, սպանելով գիտութիւնը, ինքն իրան

սպանեց, ամենասարսափելի ոչնչութեանը դատապարտեց իրան: Մահամետական այն համոզմունքն ունի, որ ուսումնասիր միտքը անօգուտ է, ուսանելութիւն է, համարեա անօրէն է. մեղք է ուսումնասիրել բնութիւնը, որովհետեւ դա կը նշանակէ մեղքը ևս: Աստուծու հետ, մեղք է պատմութիւնը ուսումնասիրել, որովհետեւ դա կը նշանակէ յիշել նախկին մոլորութիւնները: «Աստուած ամենից լաւ գիտէ, ինչ որ կայ»,—դա մահամետականների ամեն տեսակ փիլափանտութիւնների վերջին խօսքերն են: Իր խօսքերը լուսաբանելու համար, պ. Բընան առաջ բերեց Մոստուլի կարգի պ. Կայալիկի ուղղափառ նամակը, որով այդ վերջին գիտել էր նրան խոյրելով հաղորդել իրան մի քանի տեղեկութիւններ այդ քաղաքի ազդաբնակութեան մասին, նրա առեւտրի և արդիւնաբերութեան մասին: Ահա մի քանի փրաքներ կազմի պատասխանից, «Ո՞վ իմ հոգեկանը բարեկամ, ո՞վ ուրախութիւն մարդկանց, այն, ինչ բանի մասին որ դու ինձ հարցնում ես, և անօգուտ է, և ֆեսասկար: Թէպէտ իմ բոլոր օրերը սահեցին այդ երկրում, ես երբեք չեմ մտածել, ոչ համարել նրա մէջ աները, և ոչ էլ տեղեկութիւններ հաւաքել նրա բնակիչների թւի մասին: Որքան ապրանքներ կան նրանց սպլերի վրա և նրանց նաւակների խորքում —դա ինձ չէ վերաբերում: Այդ քաղաքի նախկին պատմութիւնից Աստուծուն միայն յայտնի է, թէ ո՞րքան սխալներ գործեցին նրա բնակիչները մինչև իսկամի տիրապետութիւնը: Ո՞վ իմ բարեկամ, ո՞վ իմ դառնուկ, մի աշխատիր գիտնալ այն, ինչ որ քեզ չէ վերաբերում: Լսիր, դաւաճ, չը կայ իմաստութիւն Աստուծուն հաւատալու իմաստութեան հաւասար: Նա ստեղծեց աշխարհը, կարող է ներքին արդեօք հաւասարել նրա հետ, աշխատելով թափանցել նրա արարչագործութեան գաղտնիքները: Մեծ հմտութիւնները արդեօք

երկրորդ ստամոքս կը ստեղծեն քեզ համար, իսկ քո աչքերը, ամեն տեղ գիտնալով, կը գտնեն արդեօք քեզ համար դրախտ: Ո՞վ իմ բարեկամ, եթէ կամենում ես բախտաւոր լինել, գրի՛ր քեզ համար «Աստուած մէկ է»: Չարութիւն մի գործիր, և դու այն ժամանակ չես վախենայ ոչ մարդկանցից, ոչ մահից, որովհետեւ քո ժամը կը հասնի:»

Վերջաբանութեան մէջ, պ. Բընան յայտնեց իր հայացքը գիտութեան վրա: Մարդկութեան նպատակը, նրա կարծիքով, հանգստութիւն չէ կատարելալ տգիտութեան մէջ, այլ անխնայ պատերազմ ստութեան դէմ շարութեան դէմ, այնքան անընդհատ հետադասութիւն: «Գիտութիւնը, —ասեց նա,—հասարակութեան հոգին է, որովհետեւ գիտութիւնը բանականութիւնն է: Նա է ստեղծում պատերազմական և արդիւնաբերական գերազանցութիւնը: Կը գայ ժամանակ, երբ նա կը ստեղծի սօցիալական գերազանցութիւն, ես կամենում եմ ասել, հասարակութեան այնպիսի գրութիւն, երբ կը հասնեն արդարութեան այն քանակութեանը, որը համապատասխան է տիեզերքի էութեանը: Գիտութիւնը ստիպում է ոյժին ծառայել բանականութեանը: Ասիայում բարբարոս տարրեր կան, նրանց նման, որոնք կազմում են առաջին մահամետական զօրքերը և Աստիլայի ու Չինգիսիանի ահաբեկիչ զօրաւորները. բայց գիտութիւնը փակում է նրանց ճանապարհը: Եթէ որ մարդ և Չինգիսիանը լաւ արտիլերիայի պատահէին, այն ժամանակ չէին անցնի իրանց անապատների սահմաններից: Մի՞թէ սկզբում չէին խօսում հրազենի դէմ, բայց նա, այնու ամենայնիւ, նպաստեց քաղաքակրթութեան յաղթութեանը: Ես համոզված եմ, որ գիտութիւնը բարձր է բնութեան, որ նա միայն կարող է գէշը լինել շարութեան դէմ, որ վերջ ի վերջոյ, նա կը ծառայի միայն յառաջագիւժութեանը, ճշմարիտ պրօգրէսսին:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 2-ին ապրիլ

Արիտակէս բանասէր Բէնքիանցը, որ երբեք եր չաւարարի սուրբ Մինաս եկեղեցու միջոցով և նոյն տեղի Մարիամեան ուսումնարանի կառավարչ կարճ ժամանակով, իսկ այժմ—առաջ հանաջ Մոնոու եկեղեցու և անգամ Վրաստան և Իսթրէթի թեմի կոնսիստորիայի,—Մարիամեան ուսումնարանը, որ գետեղվում էր նիւթական միջոց չունենալու պատճառով, սուրբ Մինաս եկեղեցու գաւթում դանկաւ տղայոց ուսումնարան շինութեան մէջ, փակելով—տղայոց ուսումնարանին հանգուցեալ Էֆէնդեանի կտակի համաձայն Ներսիսեան դպրոցի հողաբարձութիւնից չորս ված գեղեցիկ պահարանը իր մէջ ամբողջութեամբ գրեթե և զատական պիտոյքներով, տարել է իր սուն և չը նայելով թէ նախկին թեմական վերապետը պ. Տէր-Յովհաննիսեանի և թէ առ Տէր հանգուցեալ վիճակաւոր առաջնորդ Գաբրիէլ սրբազանի առաջադրութեանց վերադարձման մասին—մինչև այսօր չէ վերադարձուցած:

Նմանապէս սուրբ Մինաս եկեղեցուց Մոնոու եկեղեցին տեղափոխվելու ժամանակ տարել է ինչ իմ հանգուցեալ պապիս սուրբ Մինաս եկեղեցուն յիշատակ տուած արձանագատ Աւետարանը, որ ահա չորս տարի է, իր մօտ պահելով չէ վերադարձուցում: Այս հանգամանքներից դրդալրագրութեան միջոցով խնդրում ենք ասել—Արիտակէս Բէնքիանցից այս երկու հարցերին վերաբերեալ պատասխան. առաջին՝ ինչու սուրբ Մինաս եկեղեցու ուսումնարանի պահարանը դրոյով հանդերձ իր մօտ պահելով չի վերադարձուցում: Նրանցի հանգուցեալ արձանագատակ Էֆէնդեանի յիշատակը և երկրորդ՝ ինչու մեր արձանագատ Աւետարանը եկեղեցուց տանելով չի վերադարձուցում: Առաջինը հարցը վերաբերութեամբ թող ինչպէս կամենում է փոքր պապեան թեմական վերապետը, իսկ ինչ որ վերաբերում է երկրորդ հարցին—պահանջում եմ, որ անպատճառ մինչև սուրբ Զարոբեան տօնը—մեր յիշատակ Աւետարանը լինի սուրբ Մինաս եկեղեցու սուրբ սեղանի վրա:

Պօղոս Քաթանեանց

Թիւնը պատել էր հրդեհի շուրջը կազմելով մի օղակ շրջան, որ մէջ տեղը այրվում էր մի ընդարձակ խորով: Այս ու այն կողմերից վազում էին մարդիկ, որոնց միտք գեղեցիկ վրա ունէր զայրացման նշաններ չէին նկատվում: Այդպիսի և սրանից աւելի զօրեղ հրդեհներ նրանց համար սովորական դէպքեր են:

—Աստուած սիրէք... մօտեցէք... օգնեցէք... մի վախենաք... ես փող կը տամ, կը վարձատրեմ օգնողներին—եղաւ իվան Գրիգորիչի առաջին բացականչումը, որը զինակոր վազելով ամբոխի միջից ձգտում էր դէպի կրակը:

—Մի մօտենաք, ագն... առաջ մի վազէք, վտանգալ է—գոչեցին այս ու այն կողմից ամբոխի միջից յետ մղելով նրան:

Բոցը երկու գործող մասերի էր բաժանվել, որոնց մէկը դուրս էր գալի մի յարկանի տան փրկատակից կտուրից դռներից ու պատուհաններից—սա այրվում էր իւր մարեկու բաժնի, իսկ միւսը—տանն ու հինգ քայլ հեռավորութեան մի գեանափոր շինութեան միջից դուրս ձգվելով, արնթում էր ահալին բարձրութեան ամբողջ շինութեան տարածութեան չափով—սա բոցավառվել էր նաւթային միացորդի պահեստը: Իսկ այդ երկու բոցաշարաւորների մէջ տեղը ներկայացնում էր կատարեալ իրական դժոխք: Այդ կաթնաների բաժնին էր, որտեղից առաջին անգամ կրակը սկսվելով տարածվել էր երկու կողմերը: Այստեղ արդեն ամենայն ինչ վերջացած էր, ոչ մի առարկայ կրակի ճանկերից չէր ազատվել: Բացի մի քանի երկաթի կաթնաներից, որոնք իրանց մէջի դիւրաբարբոք, կիսապատրաստ-ֆօտօգէնի յանկարծակի բոցավառութեան ձայնովից պատուկելով այս ու այն կողմ էին գլորվել—ամենայն ինչ մոխիր դառնալու վրա էր:

Խորտակված պատերի ձեղքերից բոցախառն ծուխը դուրս գալով, ուր միւրր պտոյտներով միանում էր բոցի լայնաշրջան աշտարակի հետ, ինչպէս փոքրիկ դետակները հոտում են ընդար-

ձակ դետի մէջ զօրացնելով նրա կատաղի բնութայնը:

Գործարանի բակը ծածկված էր խառնիճաղանձ ամբոխով... ոտ գնելու տեղ չը կար: Իվան Գրիգորիչը բազմութեան առաջ կանգնած կարգադրութիւններ էր անում: Ամբոխի միջից մի քանիսը դանաղան խորհուրդներ էին տալիս նրան:

—Այդ միջոցներով անհնարին է բան առաջացնելը. հարկաւոր է Նօրէլի գործարանից հրաշք նստօսներ բերել տալ—ասում էր մէկը:

—Այո, այո, միայն Նօրէլի գործարանը կարող են այդ կրակին յաղթել—աւելացնում էր մի ուրիշը:

Միայն հարկան գործարանատէրեր էին, որոնք ոչ այդքան իվան Գրիգորիչի մասին էին հոգում, որքան վախենում էին որ մի գոչէ հրդեհը մինչև իրանց գործարանները հասնի:

Իվան Գրիգորիչը չէր լսում նրանց:

—Օգնեցէք... չտապեցէք... ես փող կը տամ... ջուր հասցրէք, ինչ էք ստուել... անպիտաններ... քանդեցիք դուք իմ տունը, սրիկաներ... գողեր... առաջակներ—անդադար հայտնում էր նա մշակների շտաբոված այս ու այն կողմ վազվելով:

Հրդեհը շինվում բացի իվան Գրիգորիչի գործարանի մշակներից օգնում էին և ուրիշ գործարանների մշակներ ու կողմնակի մարդիկ: Միայն առաջինները գործում էին ուղղակի կրակի դէմ ու դէմ, ամենավտանգաւոր տեղում, իսկ վերջինները աշխատում էին որքան կարելի է հեռուից գործել խոյս տալով կատաղի բոցի ալիքներից: Առաջինները հրաշք նստօսների խողովակների ծայրերից բռնած շփում էին ջուրը կրակի դէպի զօրեղ կենտրոնը, որտեղից բոցը ջրի ամենայն մի զարկին խուլ արձագանքներ էր տալիս,—իսկ վերջինների մի մասը հեռուից նստօսների կրակներից էր պտտացնում, երբորդ մասը ջուր էր աւելացնում նստօսներին: Մշակների մի ուրիշ խումբ թիքով ճող էր տիւում երկու կողմերից նստօսային մեացորդների բոցավառված պահեստի վրա:

Մի քանիսը իվան Գրիգորիչի մշակներից անգիտակցաբար այն աստիճան մօտացել էին կրակին, որ ամբողջ նրանց փոխարէն սարսափում էր: Տօթը խեղդում էր նրանց, կրակի տաքութիւնը կիզում էր նրանց կիսամեկ մարմինները, խոշոր կայծերը անձրիկ նման ճեղքվում էին նրանց գլխին, բայց խորատուգլած իրանց գործի մէջ կարծես թէ նրանք ոչինչ չէին գգում: Ամենայն վայրկեան նրանց նաւթավառակն ցնցոտիները սպառնում էին բոցավառվել թափվող կայծերից: Մի քանի ուրիշ բանաւորներ այդ թշուառների վերջին վտանգից ապահովելու համար բաւական հեռուից մի փոքրիկ նստօսով ջուր էին սրկում նրանց վրա:

Թեթիւամիտ ամբոխը շատ ժամանակ իր աչքի առաջ կատարվող ամենաողբալի տեսարանների մէջ անգամ ինստիկտաբար ձգտում է գտնել որ և ինչ նիւթ իր վաղեմի գուարճութեան համար:

—Մենք էլ գնանք ու այս վերջինների վրա ջուր անենք—ասում էին մի քանիսը անաւտօթաբար ծիծաղելով:

—Գնացէք... իսկ մենք էլ այստեղից ձեզ վրա հող կանենք, աւելացնում էին ուրիշները նոյնպէս ծիծաղելով:

—Ինչ լաւ չաղ կրակ է, տղերք, խորովածի համար—ասում էր մէկը բեկերը չիկելով:

—Ոչխարներն էլ պատրաստ են խորովելու, միայն հարկաւոր է մի բիւլ ևս նրանց կրակին մօտացնել—մէջ մտաւ մի ուրիշը, մատով ցոյց տալով հրդեհաշէ մշակների վրա, որոնք այդ ժամանակ բոցավառվել կրակին էին հասել:

Բոցը գորանում էր... ամբոխը չը դիմանալով շոքին սկսեց աստիճանաբար հեռու ու հեռու խոյս տալ:

—Փախէք... փախէք... հեռացէք... պատը քանդվում է—գոռաց յանկարծ միաբերան ամբոխը սեղմելով միմեանց և աւելի ու աւելի յետ մղվելով:

Բարձրացաւ մի խուլ որոտածայն, մի ձայն որ

նմանում էր հարկաւոր հրացանների միաժան նալ արձակման ձայնին: Մի վայրկեանում մի նեց բոլորը և ամբոխի առաջ ամենայն ինչ կրակ թանձր խաւարի մէջ: Բոցը, ծուխը, կրակը, մուրը և խողոված պատի հողափոշին խառնվելով իրարու անկրկնապիտան հրաշք մշակներին:

—Վայ դուրս... վայ մէջքս կտորվեց... Աստուած... օգնեցէք... մտաւ...—լսվում էր լաւ գեհնի միջից:

—Ոտերս փռվեցին... վայ... վայ... ահ ի՞նչ դուցիկ, Աստուած... օգնեցէք, դուրս բերէք իմ այստեղից, ոչինչ չեմ տեսնում—գոռում էին ուրիշ կողմից:

—Չեւր... ձեւր... այ... այ... այ... մի մօտենաք, Աստուած սիրէք... այրվում է ձեւր... ու՛ֆ... ու՛ֆ:

Ամբոխը մոռացաւ ծիծաղը ու կատաղեց. ամենքի երեսների վրա երևացին յուսահատութեան նշաններ... սարսափը տիքից բոլորին, ոչ չը յիմարտեց ինչ եղանակ... ուր աներեղութեամբ առաջի կարգի հրաշք մշակները: Լսվում էին միայն աղերասնելի բաց յայտնի չէր թէ որ կողմից էին գալիս նրանք և ինչտեղ էին աղերսողները: Զովհաննիս երեսկայութեան տարապարտ անգամ չէր կարող մրցել այս իրական դժոխքի հետ: Իվան Գրիգորիչ չի բարկութիւնը ու չի փոխութիւնը փոխվել էր անորոշ սարսափով... մի վայրկեան առաջ նրա տաղի դէմքը այժմ արտայայտում էր ներքին ու զոգ: Անշարժ արձանի նման նա մի տեղում ստուել էր և չը գիտեր թէ ինչ անի, նա կամեցաւ առաջ վազել, բայց չը կարողացաւ, որովհետեւ անհնարին էր, ծուխը ու փոշին խառնվելով մուրի, մոխրի և բոցի հետ կազմել էին նրա առաջ մի անթափանցելի խաւար տարածութիւն:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ գրում են: «Կարողացի՛ր «Մեզու շաղկապ» լրագրի ներկայ 1883 թվ. № 17 մէջ որ իբր թէ տեղիս հայ-աւետարանականները, կարողութիւնս այդ լրագրի մի ինչ որ թղթակցութիւնս, սատարի սկսեցին համակրել արարել յօդ-ութիւնս և նա իբր թէ այնպիսի արդեցութիւնս ու-նեցաւ երկուստեք հայ-աւետարանականները վե-րա, որ նրանք սպասուում են յամառազրուի ծերե-րանքի մասին, որպէս զի կրկին մասնին հայ-լուսա-րանական եկեղեցու ծոցը: Այդ լուրը կատարելա-պէս տուաւ է և ներկայացնում է «Մեզու» անձ-նակցութիւնս մի լաւ օրինակ: «Մեզու» յիշեալ թղթակցի նամակը ոչինչ ներդրութիւն չունե-լու տեղիս հայ-աւետարանականների վրա, շատ էլ զիտենք թէ ինչ չարժանութիւններից դրդեա-ծ է եղել յիշեալ թղթակցութիւնը: Հայ-աւե-տարանական երկուստեքները ամենին դիտաւո-րութիւն էլ չունեն ոչ յամառազրուի ծերերի կեան-քի ժամանակ, ոչ էլ նրանց մահից յետոյ թողնել իրանց կրօնը:»

Մեզ գրում են ՂԱՌԱՅԻՑ հետեւեալը: «Տեղիս երկուստեքները, չը նայելով այս տարվայ առու-տուրի պակասութեանը, ժողովրդի մէջ ստորա-գրութիւնս բայց արին այստեղ մի հասարակ ըն-թացարան հիմնելու նպատակով: Ստորագրու-թիւնը աջողութեամբ շարունակվում է: Այս դէպ-քում հարկ եմ համարում յայտնել չնորհալու-թիւն թիֆլիսացեալ պ. Արքայապետին, որ մեծ լինել է թափում ընթերցարանն աջողակեալու հա-մար: Ընթերցարանի անդամները պարտաւորվում են իրարարանչիւր շարաթ 20 կօպէկ տուրք վճա-րել ընթերցարանի պահպանութեան համար: Թիֆ-լիսից պէտք է բերվեն զրգեր: Այս տարի Ղա-րանքը ստացվում են հետեւեալ հայերէն հրատա-րակութիւնները. «Մշակ» 15 օրինակ, «Արարատ» 10 օրինակ, «Մեզու» 5 օրինակ, իսկ «Արձա-գանք», «Վարժարան», «Առողջապահական թերթ», «Գալի», և «Երևանի Գաղտնաբերութիւններ» մի-թի օրինակ:»

ԿՐԵՆՆԵՐԻՑ մեզ գրում են որ բարեկենդանի վերջին շարաթը այդտեղ հասաւ պ. Սաֆրազեան և մի քանի թատրոնական ներկայացումներ տը-ռուց հայերէն լեզուով: Այդ ներկայացումները, ինչպէս երևում է, մեծ աջողութիւն ունեցան Կերթնուում: Նոյն թղթակցից գրում է որ, ինչ-պէս ուրիշ տեղերում, այնպէս էլ Կերթնուում այս տարի առուտուրը սատարի ընկած է: Թղթա-կցից իր նոյն նամակի մէջ շատ գովում է Կեր-թնուի պոլիգլոթիկոսի պ. Կարամանցովի ետանդը, և վերջացնում է իր նամակը յայտնելով որ այս տարի ձմեռը շատ մեղմ էր, որ այժմ եղանակը արդէն դարձանային է դարձել, որ դաշտերը ար-դէն կանաչել են և որ կառավար ծովի վրա շուր-հաւեր երթեկութիւնը արդէն սկսվել է:

ՂԱՌԱՅԻՑ մեզ գրում են: «Թիֆլիսի հայոց թատրոնական խմբի դերասան պ. Սաֆրազեան, որիցը Ալմայի և պ. Արքայապետին հետ Կեր-թնուում բարեկենդան օրերին ներկայացումն տա-լուց յետոյ, մեծ պատիւ վերաբարձաւ Ղաւրա, մեզ մօտ ներկայացումն տալու համար: Բայց երբ որ յայտնվեցաւ թէ մեծ պատիւ կառավարութեան անհաճութեամբ ներկայացումն տալ չէ կարելի, այն ժամանակ պ. Սաֆրազեանց տուեց մեր քա-ղաքում, մարտի 10-ին մի կօնցերա, որից յետոյ պատրաստվում էր ուղևորվել Բաղու, բայց տեղիս հասարակութեան խնդրանքով դարձեալ մնաց Ղաւրայում, որպէս զի Զատիկից յետոյ մի քանի ներկայացումներ տայ մեզ մօտ: Պարտնի-տուած կօնցերա մեր հասարակութեանից շատ լաւ ընդունվեցաւ:»

ՎԱԳԻԿԱՎԱՍՏ քաղաքից մեզ գրում են: «Այստեղի հայ բաժանաների տղիւթեան, ան-կրթութեան և նիւթական շահաւորութեան վրա: Թղթակցից մի երկար նամակում այդ քաղաքի անհաճութեանը լուրը արարեց նկարագրե-լուց յետոյ, հրաւիրում է այդ արարեցների վրա շարժել հոգեւոր իշխանութեան ուղադրութիւնը:»

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Մար-տի 18-ին դերասան պ. Աղամեան տուեց իր վեր-ջին ներկայացումն Կօրէի թատրոնում, մասնակ-ցութեամբ ուսու խմբի դերասանների, որոնք էին. պ. Ֆորկաթի, Օստրով, Կիւրուլ, Չերնով, և

տիկին Բանդարյան: Թատրոնը լի էր հայ և ուսու հանդիսականներով: Հասարակութեան մէջ մենք ներկայացնեք հաշակաւոր ուսու դերասանին տի-կին Ֆեդոտովային, որ կայսերական թատրոնների պաշտաւ աստիներէց մինն է: Պ. Աղամեան այդ ներկայացման համար, որ իր բնեկիւնն էր, ընտ-րել էր «Համէլետը» նշանաւոր պատկերը «Լինել» թէ չը լինել» և Շիլլերի «Աւաղանի» պիեսայից Ֆրանց Մօրի մահվան տեսարանը: Օֆելիայի դե-րը կատարեց տիկին Բանդարյան, որ ուսուերէն էր պատասխանում հայաստ Համէլետին: Ֆրանց Մօրի մահով տաղանդաւոր դերասանը շատերի վրա սարսափ ձգեց, այն աստիճան իր արուս-տական կախվելը պ. Աղամեանը իրողութեանը նմանեցրեց: Յետոյ պարտնը կարգաց Ֆրանսերէն լեզուով Վիկտոր Հիւգօյի մի կտոր և հայերէն լեզուով Գամառ-Ֆաթիպայի «Հայի թուրք»: Տի-կին Բանդարյան նոյնպէս Ֆրանսերէն լեզուով կարգաց, իսկ միւս դերասանները կարգացին և երկուցին ուսուերէն լեզուով: Ներկայացման միջո-ցին Աղամեան ստացաւ մի դափնեայ պսակ և մի ոսկեայ մանեակ մեղաւորումով: Վերջինը յատկա-պէս Մօսկվայի հայ տիկինների և օրիորդների կողմից էր: Այսպէս չորս անգամ աւիթ տալով տեղիս հայ հասարակութեանը մի տեղ ժողովի-լու, պ. Աղամեան իր խաղով շատ քաղաք տպա-ւորութիւն թողեց մեզ վրա և հաշակեց հայի տա-ղանդը ուսու և օտար հասարակութեան մէջ, լսել տալով նրանց բիւից հայոց լեզուի հնչեւները:»

ՋԱՆԱԼ-ՕՂԱՌԻՑ մեզ գրում են, որ այդտեղ սկսել են պատահել այլ և այլ չարագործութիւն-ներ, ինչպէս, օրինակի համար, մինի ասն դրան վրա գիւնդով և նաւթ անելը, միւսի արտուր մէջ մանեակով ձիւս սրչ կտրելը, երրորդի ասն առջև դանդաժ լապտերների կտրատելը կամ տեղից անհետացնելը և այլն:

Եղանակը ԹԻՖԼԻՍԻՄ շարունակում է շատ փոփոխական լինել և աղբիլ ամառ: Մի օր սաստիկ տաք է լինում, միւս օր յանկարծ բարձ-րանում է անհկարգորէի քամի և եղանակը ան-միջապէս ցրտում է:

«Արձագանք» շարաթակերթի մէջ կարգում ենք հետեւեալ կտորը: «Այն երեք հաշակաւոր սնդու-կները, որոնք այնպէս դրդեցրին հայկական աշ-խարհը, այնքան զբաղեցրին մեր մատուրը, հասա-րակական կարծիքը, պաշտօնատէր անձանց և աղբի, երևան հանեցին մեր ազգային գործիչների ոտովականական ընդունակութիւնները,—մի երկար ողբիականի ենթարկվեալուց յետոյ հասած են վերջապէս Կ. Պօլիս, արտաքին գործոց նախարա-րութեան անունով: Բ. Գուրը այնքան քաղաքա-վարի է դառնել որ տեղեկացնելով Մանկունի և-պիսկուպոսի մտղունների ժամանելու մասին ս. Պատրիարքին, առաջարկել է նորան իր կողմից մի քանի պատգամաւորներ ուղարկել հանդիսաւոր լացման ներկայ գտնվելու համար: Մարտի 9-ին մտղունները բացվեցան ներկայութեամբ պատրիար-քական ներկայացուցիչների և մեծ լազմութեան,— և միջից երեւացել են Վահրամ եպիսկոպոսի անձնական զոյքեր, ինչ հանդերձեղէն, զրգեր, անձնական նամակների պատճեններ, քանի մի կօնցակներ, արձանիկայ թէյաման և ուրիշ մանր մօտը զոյքեր, որոնք մեծ արժէք չունեն: Վահ-րամ եպիսկոպոսը կամեցել է ծիծաղել իր թշա-միւնների վրա և նրան այդ աջգովել է: Թող ծիծա-ղէ սրբազանը, եթէ ներկայ տխուր հանդամանք-ները միջոցին խնդաւու ընդունակութիւնը չէ կորց-րել, բայց մենք խօսքեր չենք գտնում Վահրամ եպիսկոպոսի այն վարմունքը պատրաստելու, որի արդիւնքն են իշմիւմանի տարին Կ. Պօլսի մամու-լի մէջ հաղորդած լուրերը: Կ. Պօլսից ստացած լուրերից միւրջին համարները լի են այնպիսի տեղեկութիւններով Ս. Էջմիւմանի մասին, որոնք ոչ միայն կը գայթակղեցնեն համայն հայերին, այլ և օտարներին էլ մի տխուր զարափար պէտք է ասն մեր հոգեւոր կեանքի կենտրոնի մասին: Արդ, այդ լուրը «Թղթակցութիւնը», «մեզ կը հաղորդեն»—ները, «մեզ կը գրեն»—ները պատ-կանում են բաղադրանքից պոլսեցի պ. Նիկողայոս Թիւրքիանցիի գրչին և ակնյայտին կերպով ներ-չնչված են սրբազան Մանկունուց: Թիւրքիանցիան էֆէնդին իր անարդ գրիչը ծախել է Վահրամ ե-պիսկոպոսին, յանձն առնելով ապացուցանել աշ-խարհիս, որ այն օրից, երբ Մանկունու ձեռքից առնվել է իշխանութիւնը, Ս. Էջմիւմանը կո-ղտաւորութեան և անաւակութեան աւաղակա-

րուն է դարձել: Փառք և պատիւ «Թէքէմանը Լիֆթեարի» և «Հայրենիքի» խմբագիր Էֆէնդին-լին, որոնք իրանց լրագիրների էջերը դարձա-րում են այնպիսի աղտեղութիւններով, որոնցից և ոչ մէկը, նոյն իսկ իբրեւ օրինակ, առաջ բերել չենք վստահանում, չը կամենալով կար-միր զոյնով ներկել մեր ընթերցողների այ-տերը և յարգելով տպագրական խօսքը: Բայց դարմանալի իրողութիւն. պ. Թիւրքիանցիան սո-վորաբար իր թղթակցութիւնների վերջաբանում ասում է թէ հաւատարմ է որ Մակար արքեպիսկո-պոսի Ս. Էջմիւմանի ժամանելուն պէս անկարգու-թեանց վերջ կը դրվի, միթէ որ և է համարա-լուութիւն կայ սրբազան Մակար արքեպիսկոպոսի և սրբազան Մանկունու մէջ:»

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Այնեալ տարի կարգացնեք ձեր լրագրում որ Թիֆլիսում մտադիր են պ. Բաֆիթի «Խնթը» փոխադրել թատրոնա-կան պիեսայի: Այժմ մեզ ցանկալի է իմանալ ար-դեօք այդ դիտաւորութիւնը իրագործվեցաւ թէ ոչ, որովհետեւ այստեղ էլ դիտաւորութիւն կայ փո-խադրել այդ բանը թատրոնական պիեսայի:»

Մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱՉԷՏԻՑ հետեւեալը: «Մարտի 20-ից սկսած եղանակը այստեղ մեղմա-ցել է. հաղադրծները սկսեցին արդէն վար ու ցանքը:»

Նոյն տեղից մեզ գրում են որ Նոր-Բայաչէտի հայր գործակալ տէր Նիկողայոս մեծ պատի ամեն կիրակի երեկոները քարոզներ է խօսում, իր քա-րոզների համար նիւթ առնելով ժողովրդի համար կրթական, բարոյական հարցերը, կամ նոր սե-րունդին դատարարակեալ խնդրի: Լսողները մեծ համակրութեամբ են վերաբերվում դէպի տէր հօր քարոզները:»

Նոյն տեղից մեզ գրում են: «Ձեր լրագիրը այս-տեղ մեծ համակրութիւն է վայելում. թէ է «Մշակը» միայն 10 օրինակ է ստացվում Նոր-Բայաչէտում, բայց իւրաքանչիւր օրինակը գոնէ 10 մարդ են կարդում: Սատարի հետաքրքրութեամբ և համակրութեամբ ենք կարգում «Մշակի» առաջ-նորդները կաթողիկոսական խնդրի մասին և ան-համբեր սպասում ենք այդ յօդաւորների շարունա-կութեանը:»

ՎԱԳԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ գրում են: «Այս օրե-րումս աւաղակները լոյս չերեկով յարձակվել են Զոգակաթ վանքի վանահօր վրա, մի քանի ծանր հարուածներ են հասցրել նրան և յափշտակելով մի քանի իրեր, անհետացել են: Յնրապատրել է այդ օր ցերեկով դործած յարձակումն: Մարմա-ւոր իշխանութիւնը քննութիւն է նշանակել այդ չարագործութեան մասին:»

Նոյն տեղից հաղորդում են մեզ որ Վաղար-շապատի թատերականները խումբը պատրաստվում է Զատիկից յետոյ մի թատրոնական ներկայա-ցումն տալ հայերէն լեզուով, յօդուտ մի քանոր աշակերտով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ընդունից հեռագրում են, որ լօրը Գիւնթի-բին շուտով Կ. Պօլիս կը վերադառնայ: Նրան տրված են լիազոր հրահանգներ Արմենիայում մտնելի վերանորոգութիւնների մասին:

—Ընդունից առաւ լրագիրներին հեռագրում են, որ համայնքների ժողովում լօրը Ֆիցմօրիս յայտ-նեց որ միւրիդիտեան իշխան Բիւր-Բօզա դեռ ևս վերջնականապէս նշանակված չէ իրականաւ նա-հանդաբետի պաշտօնի վրա: Անգլիան չէ հաւա-նում այդ նշանակութիւնը:

—Իվերպուլից հաղորդում են, թէ այնտեղի պօլիցիան տեղեկացաւ, որ իրանդայի Իրիլին կալանաւորելը, որի մօտ դժոխային երկու մարե-նաներ գտնվեցան, արդէն դրեց մի նոր յանցա-ւոր դիտաւորութեան իրագործմանը, որ մտադր-ված էր մի շարաթ առաջ: Ի նկատի ունեն հայ-թիցնի հասարակական շինութիւնը Մեծ Բրիտա-նիայի զինուոր քաղաքներից մէկի մէջ: Պօլիցիա-կին յայտնի է այդ քաղաքի անունը, բայց նա դադարի է պահում Գոթայայի այդ մեքենաները ահագին ոյժ ունեն և կարող էին արարալիւ աւերումներ գործել: Կարծում են, որ կալանա-

ւորականներ ֆինիլներ են, որոնք նպատակ են դրել ճայթեցնել հասարակական շինութիւններ և նաւեր, որպէս զի դրանով ստիպեն անգլիական կառավարութեան անկախութիւն տալ Իրան-դիային:

—Վերջին ժամանակներում Հայաստանի մէջ յաճախ կրկնվում են արիւնհեղ կռիւներ յայտնի և հայերի մէջ, որոնք երկրի մէջ մեծ յաղմուք են բարձրացնում: Թէպէտ այդ անկարգութիւն-ները նշանաւոր չեն, բայց և այնպէս երկիւղ են պատճառում, որովհետեւ թիւրքաց կառավարու-թիւնը անտարբեր է նկատ:

—Հւսովից հեռագրում են: «Խաղալայի յարա-բերութիւնները դէպի Աւստրիան և Գերմանիան նկարագրելու համար կարող է նախաւոր լինել հետեւեալ դէպքը: Խաղալայի արտաքին գործերի մինիստր Մանչլինի արտասանած յայտնի ձեռից յետոյ իշխան Բիսմարկի տուած ձաշի ժամանակ կանցրելը «Մանցլիտատ» չքանչանով մօտեցաւ խաղալայի դեսպանին և ասեց. «Ձեր մինիստրը երե-ւելի ձեռ արտասանեց և դրանով մեծ ծառայութիւն մատուց խաղաղութեանը: Հաղորդեցք նրան, որ ես ի բուր սրտէ նրան շնորհակալութիւն եմ յայտնում:

—«Kieler Zeitung» լրագիրը հաղորդում է հետեւեալ մանրամասները գերմանական սօցիա-լիստների ժողովի մասին Կօպենհագենի մէջ: Գերմանական սօցիալ-դեմոկրատների բոլոր առաջ-նորդները մարտի 18-ին ներկայ էին ժողովին: Ինչպէս երևում է, այդ պարտնները կարողացան ծածկել իրանց դիտաւորութիւնը ինչպէս զանա-կան, նոյնպէս և գերմանական իշխանութեանից նրանով, որ լուր տարածեցին, թէ ժողովը Շվեյ-ցարիայի մէջ կը կայանայ: Ժողովի նիստերը սկսվեցան ուրախ օրը: Ներկայ էին 60 հոգի: Նախագահ ընտրվեցաւ Բերել, փոխնախագահ Հադենկել: Վիճաբանութիւնները զլիսաւորա-պէս իշխան Բիսմարկի սօցիալ—քաղաքական նա-խադիմների մասին էին, որոնք որոշ վճռկեցաւ մարտիկ բոլոր ուշժող: Բայց այդ դէպքում շա-րունակել կուի գումարաւորների դէմ Վճռկեցաւ նոյնպէս ընդհանուր ստորագրութիւն բանալ Կար Մարկին արձան կանգնեցնելու համար: Ընդամե-նը երեք նիստեր կայացան: Ժողովի փակվելուց յետոյ դանիական սօցիալիստները ճաշկերպից ստեղծ ի պատիւ իրանց գերմանական համախոհ-ների: Կօպենհագենի պօլիցիան սկզբից անհան-գտապաւ, բայց վճռեց դործել միայն այն ժա-մանակ, երբ ժողովի նիստերը դադարեցան: Ժո-ղովի բոլոր անդամներից դանիական օրենքների համեմատ պահանջեցին վկայել իրանց անձնաւո-րութիւնը և նրանք խոտտովանվեցին, որ եկել են Կօպենհագեն կեղծ անուններով: Կօպենհագենի Բերլին վերադառնալու ժամանակ գերմանական բախտաւոր սօցիալ-դեմոկրատական պատգա-մաւոր Վօլմար Կալանաւորվեցաւ Կրիլի մէջ, մե-ղադրելով սօցիալիստների ժողովին մասնակ-ցելու մէջ:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԻՍՏՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՑ

ՎԻՆՈ, 4 ապրիլի: Երէկ կայացաւ դա-տալձիւս Վինիօի փոխադարձ կրեդիտի տուա-ջին ընկերութեան անանկանալու մասին: Այդ ընկերութեան նախագահ Նախաւորիչը որ վատնեց մօտ 200,000 բուբլ, դատա-պարտված է քստորի Իրիւստիկի նահանգի մէջ ապրելու համար: Հաշապահ Վերբ-լօվսիկ, որ մեղադրված է վատնումն չը յայտնելու մէջ, կը կալանաւորվի մի տա-րով: Մնացած մեղադրվածները արդարեւ-րած են:

ԽԱՐԱՎ, 4 ապրիլ: Աշնանային ցանք-տերը հարաւում լաւ են պահվել:

ՄՈՍԿՎԱ, 4 ապրիլ: Թաղապետութեան համար պատգամաւորներ են սպասում Կով-կասից և Անդրկովկասից, նոյնպէս և Տու-գայի, Ուրալի և Սեմիպալատինսկի կիր-դիւնների կողմից: Երէկ կայացաւ հինգերորդ զրոյց աղանդաւորների հետ:

ԿԻԵՄԵՆՉՈՒԳ, 4 ապրիլ: Գնէպրի շո-գեհաւային ընկերութիւնը կանոնաւոր ընչ-տեր սկսեց:

ՎԵՐԵՆ-ՈՒԲՈՒՍԿ, 4 ապրիլ: Ուղեւոր-վում են Մօսկվա թաղապետութեանը ներ-կայ գտնվելու համար պատգամաւորներ Կրեդիտներից, Տարանցներից և Գուրգան-ներից, տանելով սկուտեղ և աղաման տե-ղական նկարով:

ԲԵՐԼԻՆ, 4 ապրիլ: Մեկնեւորը-Շվեդի-նի մեծ երեքսի մահուան արտոնումով Վիլ-հելմ կայսրը ուղևորվում է Շվեդին թաղ-մանը ներկայ գտնվելու համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՐՈՒՆԻ

